

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

(Առաջին հանրապետության խորհրդարանի 100-ամյակի առթիվ)

Գ.Գ. Թանանյան

Պետությունների կայացման գործընթացում խորհրդարանները միշտ էլ կարևորագույն դերակատարություն են ունեցել, հատկապես այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է պետականության առաջին քայլերին: Հայաստանի առաջին Հանրապետությունը ծնունդ առավ այնպիսի ժամանակներում, երբ ժողովրդին համախմբելու, կազմակերպելու հրատապ խնդիր կար, և պետական հիմքը ճիշտ հաշվարկների վրա կառուցելու մեծ պատասխանատվություն էր ենթադրում: Այս պայմաններում առանձնահատուկ էր երկրի օրենսդիր մարմնի՝ Հայաստանի առաջին խորհրդարանի առաքելությունը, որ ստանձնեց 543 տարի՝ 1375թ. Կիլիկյան պետության անկումից ի վեր պետականություն չունեցած ժողովրդի ներկայացուցչության դերն այդ ժողովրդի պատմության բարդագույն ժամանակահատվածում: Իսկ այդ ժամանակահատվածը առավել քան բարդ էր: Առաջին աշխարհամարտը և 1917թ. ռուսաստանյան հեղափոխություններն արմատական տեղաշարժեր ու փոփոխություններ առաջացրին ինչպես ամբողջ Ռուսական կայսրության, այնպես էլ Անդրկովկասի ու Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում: Սկսվեցին առաջին քայլերը Հայաստան երկրի ժողովրդավարացման ուղղությամբ: Զարթոնք ապրեց ազգային կյանքը, աճեց ազգային ինքնագիտակցությունը: Հայ քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, Սոցիալ-դեմոկրատ, Էսէժ, «սպեցիֆիկ» և այլն) նախաձեռնությամբ նախապատրաստվեց և 1917թ. սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբներին Թիֆլիսում գումարվեց արևելահայերի համագումարը (համախորհրդակցությունը), որին մասնակցում էին քառանդամ համակարգով ռուսահայերի կողմից ընտրված 203 պատգամավորներ: Համագումարի աշխատանքների վերջնափուլում բազմակուսակցական հիմքի վրա ընտրվեց 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ Հայոց (Կենտրոնական) ազգային խորհուրդ: Կուսակցությունների քաղաքական կշռին համապատասխան՝ Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էին ՀՅԴ՝ 6, ՀԺԿ՝ 2, սոցիալ-դեմոկրատ՝ 2, Էսէժ՝ 2, անկուսակցական՝ 3 անդամներ: Խորհրդի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը (ՀՅԴ): Հայոց ազգային խորհուրդը՝ որպես գործադիր մարմին, փաստորեն ստանձնեց արևելահայ հատվածի քաղաքական կյանքի ղեկավարությունը: Բացի Ազգային խորհրդից, դարձյալ կուսակցական համամասնության սկզբունքով, կազմվեց նաև 35 հոգուց բաղկացած օրենսդիր մարմին՝

Ազգային ժողով, որը հանդիսանում էր արևելահայության ժամանակավոր ներկայացուցչական օրենսդիր մարմին: Տեղերում արդեն հիմնվել և գործում էին նաև տեղական հայ ազգային խորհուրդներ՝ Երևանի, Բաքվի, Ջանգեզուրի, Արցախի, Նախիջևանի, Ախալքալաքի և այլն: 1917 թ. մայիսից հիմնվել և գործում էր նաև արևմտահայերի գործադիր մարմինը: Դեպքերի աննպաստ զարգացման հետևանքով Կովկասյան ռազմաճակատը քայքայվեց, Թուրքիան անցավ հարձակման, իսկ 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ ներքին ու արտաքին ազդակների թելադրանքով, Ռուսաստանի առանձին երկրամասեր, այդ թվում՝ Անդրկովկասը, դուրս մնացին նորաստեղծ խորհրդային կառավարության վերահսկողությունից: Կազմալուծված և անգործության մատնված Անդրկովկասյան հատուկ կոմիտեին (ԱՀԿ) փոխարինեց 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասի կոմիսարիատը՝ որպես երկրամասի գործադիր իշխանություն: Այն բանից հետո, երբ 1918թ. հունվարի 6-ին խորհրդային կառավարությունը ցրեց ժողովրդավարական ճանապարհով ընտրված համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, հիմնականում դրա Անդրկովկասյան հատվածի պատգամավորների թվի, կուսակցական համամասնության սկզբունքով, եռապատկման միջոցով կազմվեց Անդրկովկասյան սեյմը (խորհրդարանը): 1918թ. փետրվարի 10-ին բացված սեյմի 125 պատգամավորներից 32-ը ս.դ. մենշևիկներ էին, 30-ը՝ մուսավաթական, իսկ 27-ը՝ դաշնակցական, մնացյալը՝ այլ կուսակցություններից ու ազգային ներկայացուցիչներից: Ազգային կազմի տեսակետից սեյմի պատգամավորության շուրջ մեկ երրորդը հայեր էին, այդ թվում՝ 27-ը՝ ՀՅԴ խմբակցությունից (Ռ. Ջորյան, Հ. Օհանջանյան, Հ. Ջավրիյան, Հ. Քաջազունի, Ս. Տիգրանյան, Ալ. Խատիսյան, Խ. Կարճիկյան, Ս. Հարությունյան և այլք), 4-ը՝ սոցիալ-դեմոկրատ մենշևիկյան խմբակցությունից (Ա. Ջուրաբյան, Ս. Փիրումյան, Արզնկյան, Գ. Տեր-Ղազարյան), 3-ը՝ էսեռ խմբակցությունից (Լ. Աթաբեկյան, Ս. Սահակյան, Լ. Թումանյան) և այլն: Պետք է ասել, որ այստեղ սեյմի հայ պատգամավորները խորհրդարանական աշխատանքի որոշ փորձ ձեռք բերեցին, որը, ինչ խոսք, հետագայում օգտակար եղավ Հայաստանի ապագա խորհրդարանական աշխատանքների ժամանակ: Կարևոր էին հատկապես Հայոց ազգային ժողովի հրավիրած Թիֆլիսի (1918թ. ապրիլի 15-18), Հայոց ազգային խորհրդի (ապրիլի 6-8), Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի (մայիսի 25-26) նիստերը¹: Վերջին նիստում Հայոց ազգային խորհուրդն ըստ էության իր վրա վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակավոր կառավարության գործառույթները: Հատկանշական է, որ թե՛ Հայոց ազգային խորհրդում, թե՛ Ազգային ժողովում հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում հանդես են եկել ազգային միացյալ ճակատով: Ծագած ներքին սուր հակասությունների պատճառով 1918թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան դաշնությունը քայքայվեց: Վրաստանը

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, Գիրք առաջին, Երևան, 2010, էջ 14:

կայսերական Գերմանիայի հովանավորությամբ մայիսի 26-ին հռչակեց իր անկախությունը, իսկ Ադրբեջանը Քեմալական Թուրքիայի հովանավորությամբ մայիսի 27-ին հայտարարեց «Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության» անկախության մասին: Ի դեպ, հենց այդ ժամանակ թուրքերն այդ հանրապետությունը առաջին անգամ կոչեցին «Ադրբեջան»: Հայոց ազգային խորհրդին այլ բան չէր մնում, քան կողմնորոշվել դեպի Հայաստանի անկախությունը: «Ընտրութիւններ անելու տեղ չէր մնացել,- գրում է Հ. Քաջազունին ճակատագրական այդ օրերի մասին:- Պատմությունը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջեւ. Պետք է յանդգնութիւն ունենայինք անցնել վրայից, եթէ չէինք ուզում խորտակուել: Պետք է տէր դառնայինք մեր Հայրենիքին, ապա թէ ոչ՝ կը կորցնէինք այն գուցէ անդառնալիօրէն: Եթէ տատանւէինք, եթէ ուշացնէինք մեր յայտարարութիւնը, Հայաստանը կըմնար *res nullius* (ոչ ոքի պատկանող իր) ու, իբրեւ այդպիսին, բաժին կդառնար հարեւաններին՝ թուրքերին, վրացիներին, ազրբեյջանցիներին»²: Այն քննարկվեց Հայոց ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստերում (առավոտյան և երեկոյան): Բոտն քննարկումներից հետո Հայոց ազգային խորհուրդը (ՀԱԽ), այլ լուծում չտեսնելով, պարտադրված էր հռչակել Հայաստանի անկախությունը: Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, գումարվեց ՀՅԴ արևելյան և արևմտյան բյուրոների, ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի, սեյմի ու Հայոց ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստ: Այստեղ մեկ անգամ ևս քննության առնվեց քաղաքական կացությունը, և ընդունվեց իրավիճակից բխող միակ հնարավոր ու ճիշտ որոշումը՝ Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն: Միաժամանակ որոշվեց կազմել կառավարություն՝ միջկուսակցական սկզբունքով, ինչպես նաև Ազգային խորհուրդն ու նորակազմ կառավարությունը տեղափոխել Երևան, որը պետք է դառնար Հայաստանի նորանկախ հանրապետության մայրաքաղաք: Այդ նույն նիստում Հ. Քաջազունին առաջադրվեց որպես կառավարության նախագահի (վարչապետի) պաշտոնի թեկնածու: Միայն դրանից հետո՝ մայիսի 30-ին, Հայոց ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլը. որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: Հանձնարարվեց Նիկոլ Աղբալյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը): Հռչակագրի տեքստն ընդունեց Ազգային խորհուրդը, իսկ մայիսի 31 -ին այն հրապարակվեց մամուլում: Հռչակագրում մասնավորապես ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական զավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները

² Քաջազունի Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 23-24:

հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»³: Հոչակագրում քաղաքական և հոգեբանական որոշակի գործոնների թելադրանքով թեև որոշակի չէր խոսվում անկախության մասին, սակայն դիվանագիտական մոտեցմամբ ձևակերպված է այն միտքը, որ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը, որն էլ ինքնըստինքյան նշանակում էր Հայաստանի անկախության հռչակում: Բացի դրանից, հոչակագրում հեռատեսորեն մատնանշվում է «հայկական գավառներ» հասկացությունը, ըստ այդմ՝ Անդրկովկասի նահանգներում գտնվող հայաբնակ բոլոր գավառները, այդ թվում՝ Նախիջևանը, Ղարաբաղը, Գանձակի հայաբնակ շրջանները, Լոռին, Ջավախքը, թուրքական գործերի ռազմակալած Երևանի նահանգների մի շարք գավառներ, Կարսի մարզը և հայկական այլ տարածքներ: Բայց և այնպես, անկախության հռչակման պահին ՀՀ տարածքը 12 հազ. քառ. կմ էր, բնակչությունը՝ մոտ 700 000, որի ուղիղ կեսը գաղթականներ էին: Հայաստանի անկախության հռչակումից հետո՝ 1918թ. հունիսի 7-ին, Ազգային խորհուրդը կառավարության նախագահ (վարչապետ) ընտրեց Հ. Քաջազնունուն, որին հանձնարարվեց կազմել կառավարություն: Հուլիսին Հայոց ազգային խորհրդի հիմքի վրա ձևավորվեց ՀՀ գերագույն օրենսդիր մարմինը՝ Հայաստանի Խորհուրդը (խորհրդարանը): Ստեղծված իրավիճակում առաջնահերթ խնդիր էր իշխանության մարմինների ձևավորումը: Հայոց ազգային խորհուրդը, որի նախագահն էր Ա. Ահարոնյանը և Քաջազնունու ոչ լիակազմ կառավարությունը, 1918թ. հուլիսի 19-ին Վրաստանից փոխադրվեց նորանկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: Կառավարության կազմը Երևանում ստացավ ավարտուն տեսք: Բայց մինչ ՀԱԽ-ն ու կառավարությունը (ոչ լիակազմ) Թիֆլիսից կժամանեին Երևան, տեղում արդեն Արամ Մանուկյանի ջանքերով ստեղծվել էր գործադիր մարմին, որը կոչվել է ժամանակավոր վարչություն կամ վարիչների մարմին: Ա. Մանուկյանը վարել է Երևանի նահանգային վարչության նախագահի և զինվորական գործերի վարիչի պաշտոնը: 1918թ. հուլիսի 24-ին հրապարակվեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարության լրիվ կազմը. վարչապետ՝ Հովհաննես Քաջազնունի (Բգիթխանյան), արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, արդարադատության նախարար՝ Գ. Պետրոսյան: Բացի վերջին երկուսից, մյուսները դաշնակցականներ էին: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեց նաև բարձրագույն օրենսդիր իշխանություն: Ժամանակի սղության պատճառով տարբեր քաղաքական ուժեր քանակությունների ու փոխզիջումների միջոցով որոշում են ընդունել առանց ընտրությունների կազմել Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմին՝ Հայաստանի

³ Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, Գիրք առաջին, էջ 16:

խորհուրդ (ՀԽ), Հայոց ազգային խորհրդի անդամների եռապատկման սկզբունքով, որի կազմում 18 պատգամավոր ներկայացրել է դաշնակցությունը, 6-ը՝ Հայ ժողովրդական կուսակցությունը, 6-ը՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, 6-ը՝ Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, իսկ 2 պատգամավոր եղել են անկուսակցական: Չէին եռապատկվել միայն անկուսակցականները: Խորհրդարանի պատգամավոր են դարձել նաև հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ 6 թուրք-թաթար, 1 ռուս և 1 եզդի: Այսինքն՝ 46 պատգամավորից 38 -ը հայ էին: Խորհրդարանում դաշնակցությունը կառավարող կուսակցություն էր, իսկ մնացածները՝ ընդդիմադիր: Խորհրդարանում ձևավորվեցին կուսակցական ֆրակցիաներ: Եթե բնորոշելու լինենք ընդդիմադիր կուսակցություններին, նրանց գործելակերպի և գաղափարախոսության առումով, ապա պետք է ընդգծել, որ նրանք երբեք ոչ մի ձևով չներդաշնակեցրին իրենց գործունեությունը, խորհրդարանում ձևական բլոկներ ու «միացյալ ճակատներ» չկազմեցին: 1918 թ. օգոստոսի 1 -ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի առաջին Հանրապետության պառլամենտի առաջին գումարման առաջին նստաշրջանի հանդիսավոր բացումը՝ հյուրերի և 46 պատգամավորի մասնակցությամբ: Ակումբի թատերասրահը վերածված էր խորհրդի ընդհանուր ժողովասրահի, իսկ կողքի սենյակները՝ նախագահության, ֆրակցիաների, դիվանատան և այլն: Բեմի վրա նախագահության օթյակն էր՝ աջ կողմում ունենալով մի սեղան թարգմանների համար, ձախ կողմը՝ ճառախոսների համար ամբիոն: Դահլիճի առաջին մասում՝ բեմին կից, շինված էին երկուական օթյակներ: Ձախ թևի առաջին օթյակը հատկացված էր կառավարությանը, երկրորդը՝ գորահրամանատարությանը: Աջ կողմի առաջին օթյակը կաթողիկոսի համար էր, իսկ երկրորդը՝ օտար պետության ներկայացուցիչների, հետևի մասը և վերնահարկը՝ հասարակության: Դահլիճի մեջտեղը շարված էին խորհրդի անդամները՝ հետևյալ կարգով՝ հաշվելով աջից ձախ: Աջ կողմում էին՝ Հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիա, անկուսակցականներ, մահմեդական պատգամավորներ, ռուս պատգամավոր և եզդի պատգամավոր, կենտրոնում՝ ՀՅԴ ֆրակցիա, ձախ ում՝ սոցիալիստ-հեղափոխականներ, սոցիալ-դեմոկրատներ: Կառավարական օթյակում նստած էր վարչապետ Հ. Քաջազունին՝ կառավարության անդամներով: Դիվանագիտական օթյակում էին գերմանական, ավստրիական և օսմանյան ներկայացուցիչները, պարսից հյուպատոսը, ռուս, թուրք և ուկրաինական Ազգային խորհրդի ներկայացուցիչները⁴: Զինվորական օթյակում էին Հայաստանի Հանրապետության առաջին սպարապետ Թովմաս Նազարբեգյանը, գորահրամանատարներ Միլիկյանը, Դրոն և ուրիշներ: Մամուլի ներկայացուցիչներին հատկացված էր առանձին տեղ: Ամբողջ սրահը կրում էր խորհրդավոր և տոնական բնույթ: Նստաշրջանն իր շնորհավորական հակիրճ ճառով

⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ (1918-1920), Երևան, 2010, էջ 7:

բացեց Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Սահակյանը և ավարտելով ասաց. «Սպասված համարելով իմ պարտականությունները իբրև նախագահ Գերագույն խորհրդի և հաջողություն ցանկանալով ձեզ ձեր պատասխանատու պետական գործունեության մեջ, առաջարկում եմ ընտրել նախագահ Հայաստանի Խորհրդի»⁵: Ա. Սահակյանի բացման ճառից հետո, ժողովրդական «կեցցե»-ների և «Մեր հայրենիքի» երաժշտական ուղեկցությամբ, խորհրդի շենքի ն բարձրացվեց հայկական եռագույն դրոշը: Նախագահի ընտրության համար Դաշնակցության խմբակցությունը առաջադրեց Ա. Սահակյանի թեկնածությունը: Բաց քվեարկությամբ նա ընտրվեց Հայաստանի Խորհրդի նախագահ. ձեռնպահ մնացին 6 սոցիալ-դեմոկրատ պատգամավորները: Շնորհակալություն հայտնելով Խորհրդին՝ նախագահն առաջարկեց ընտրել երկու փոխնախագահ: Փոխնախագահներ ընտրվեցին Հայ ժողովրդական կուսակցության անդամ Գ. Տեր-Խաչատրյանը և Սոցիալիստ-հեղափոխական խմբակցության անդամ Դ. Զուբյանը: Ավագ քարտուղար ընտրվեց Պ. Զաքարյանը: Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստի փակումից հետո Խորհրդի շենքի առջև տեղի ունեցավ գորահանդես, որն ընդունեց վարչապետ Քաջազնունին: Հաջորդ նիստին՝ օգոստոսի 3-ին, վարչապետ Քաջազնունին ոչ թե ներկայացրեց իր կառավարության ծրագիրը, այլ տվյալ իրավիճակի և հետագա անելիքների վերաբերյալ հանդես եկավ հայտարարությամբ: Նա մասնավորապես նշեց. «Բացառիկ ծանր պայմանների մեջ գործի է անցել իմ կազմած կառավարությունը: Նա կոչված է իրականացնելու գործադիր իշխանություն մի պետության մեջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակավին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարությունը չունի ոչ մի հենարան անցյալում. նա չի հաջորդում նախկին կառավարության՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը, նա նույնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանության կարիքներին հարմարեցված պատրաստի ապարատներ: Նա հարկադրված է սկսելու ամեն բան սկզբից, անձն քառսից և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին: Մյուս կողմից, կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատաստրոֆային»⁶: Այս բացառիկ դրությունը նախորոշում է արդեն կառավարության գործունեության բնույթը: Եվ, ըստ այդմ, Քաջազնունին նշում է, որ այդ կառավարությունը «չի կարող ձգտել բազմակողմանի և լրիվ գործունեության, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով: Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար անհրաժեշտ պայմաններ, ահա թե ինչպես է ըմբռնում իր կոչումը ներկա կառավարությունը»⁷: Ըստ այդմ՝ կառավարությունն իր առջև

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁶ Նույն տեղում, էջ 10:

⁷ Նույն տեղում:

դրեց հրատապ լուծման ենթակա խնդիրներ, որոնք վերաբերում էին ներքին գործերին, ֆինանսներին, արդարադատությանը, զինվորական գործին և արտաքին գործերին: Երեք ամիս գործելուց հետո՝ 1918 թ . նոյեմբերի 4-ին Հովհաննես Քաջազունու այս կառավարությունն ամբողջ կազմով խորհրդարանին ներկայացրեց իր հրաժարականը: Հրաժարականը պատճառաբանվում է նրանով, որ խորհրդարանի մեծամասնության և կառավարության մեջ այնպիսի փոխհարաբերություններ են ստեղծված, որ կառավարությունն այլևս արդյունավետ աշխատանք չի կարող կատարել: Կառավարության հրաժարականն ընդունվում է բոլոր ֆրակցիաների կողմից միաձայն: Այնուհետև դարձյալ Քաջազունուն հանձնարարվում է նոր կաբինետ կազմել, որն ընդունվում է 25 կողմ ձայնով՝ ընդդեմ 14-ի և մեկի ձեռնպահությամբ: Նույն նիստում վարչապետ Քաջազունին հայտարարում է կոալիցիոն (միջկուսակցական) նոր կառավարության կազմը՝ բաղկացած 4 դաշնակցական, 4 հայ ժողովրդական և 1 անկուսակցական նախարարներից: Արտաքին գործոց նախարար է նշանակվում Ս. Տիգրանյանը, ներքին գործոց՝ Ա. Մանուկյանը, խնամատարության և աշխատանքի՝ Խ. Կարճիկյանը, իրավաբարության՝ Մ . Հարությունյանը, հանրային կրթության՝ Մ . Աթաբեկյանը, պարենավորման՝ Լ. Ղուլյանը, ֆինանսների՝ Ա. Էնֆիաջյանը, ռազմական՝ Հ. Հախվերդյանը⁸: Այս կառավարությունը արդյունք էր ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի կազմած կոալիցիայի: 1919թ. փետրվարի 15-ին Քաջազունին գործուղվում է Վրաստան, իսկ այնուհետև՝ ԱՄՆ՝ վարելու հայանպաստ բանակցություններ: Այդ նույն ժամանակ նա ներկայացնում է իր կառավարության երրորդ կազմը՝ 4 անդամ ՀՅԴ-ից, 4-ը՝ ՀԺԿ-ից և մեկ անկուսակցական: Արտաքին գործերի նախարար է նշանակվում Ս. Տիգրանյանը, ներքին գործերի՝ Ա.Խատիսյանը, խնամատարության՝ Ս. Թորոսյանը, ելևմուտի՝ Ա. Էնֆիաջյանը, արդարադատության՝ Ս. Հարությունյանը, կրթության՝ Գ.Մելիք-Ղարազյոզյանը, մատակարարման՝ Ք. Վերմիշը, ռազմական՝ Ք.Արարատյանը: 1919թ. ապրիլի 26-ից վարչապետի պաշտոնակատար է դառնում Ա. Խատիսյանը, իսկ Քաջազունին շարունակում է բանակցությունները ԱՄՆ-ում հայկական պատվիրակության կազմում: Այն բանից հետո, երբ 1919թ. գարնանը Հայաստանի քաղաքական դրությունն արդեն փոքր ի շատե կայունացել էր, իսկ առաջին գումարման խորհրդարանը ձևավորվել էր ավանդական լեգիտիմության սկզբունքով՝ հիմք ընդունելով մինչպետական ժամանակաշրջանի ազգային-քաղաքական իրողությունները, որի պատճառով նրա կազմն իրապես չէր արտահայտում երկրի քաղաքական ուժերի հարաբերակցությունը ազգաբնակչության մեջ, խնդիր դրվեց արձակելու նշանակովի կամ ոչ լեգիտիմ խորհրդարանը և համաժողովրդական ընտրությունների միջոցով կազմավորել նոր՝ բանական-իրավական, պառլամենտական քաղաքական համակարգին համապատասխանող լեգիտիմ խորհրդարան: Հարկ է նշել,

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 84:

որ Հայաստանի խորհրդարանի հիմնադիրները, ի սկզբանե քաջ գիտակցելով, որ այդ կարգավիճակով խորհրդարանը երկար գոյատևել չի կարող, սկզբունքորեն որոշեցին, որ խորհրդարանը մինչև լեգիտիմ ընտրությունները լինելու է ժամանակավոր՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ պատճառներով: Նախ՝ ժամանակի ցայտնոտային վիճակը, իսկ մյուս կողմից պետաիրավական դաշտի՝ սահմանադրության, ինչպես նաև նրան փոխարինող օրենսդրական կամ իրավական ակտերի լիակատար բացակայությունը, որի հետևանքով ոչ մի գործնական հնարավորություն չի եղել համաժողովրդական ընտրությունների միջոցով լեգիտիմ խորհրդարան կազմելու: Եթե դրան էլ ավելացնենք ոչ լեգիտիմության հետևանքով ժամանակ առ ժամանակ խորհրդարանում ծագող ճգնաժամային իրավիճակները, պատկերն ավելի ամբողջական կլինի: Այս խնդիրների լուծման համար 1919թ. մարտի 31-ին ընդունվեց «Պառլամենտի ընտրությունների մասին» օրենքը: Ըստ օրենքի Ա գլխի՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչությունը՝ առանց սեռի խտրականության՝ ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության միջոցով՝ գործադրելով համեմատական ներկայացուցչական սկզբունքը: ՀՀ պառլամենտի ընտրությունները կատարելու ժամանակ պետության բովանդակ տարածությունը հանդիսանում է մի ընտրական շրջան: Պառլամենտի անդամների թիվը սահմանվում էր ութսուն: Օրենքի Բ գլխում սահմանվում է, թե ովքեր իրավունք ունեն և իրավունք չունեն մասնակցելու ընտրություններին: Ըստ այդմ, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ երկու սեռի քաղաքացիները, որոնց քսան տարին լրանում է ընտրության օրը, վայելում են պառլամենտի ընտրություններին մասնակցելու իրավունք: Իսկական զինվորական ծառայության մեջ եղածներն ընտրություններին մասնակցելու իրավունք չունեն: Ընտրություններին չեն մասնակցում նաև նրանք, որ հաստատված օրինական կարգով խենթ կամ խելագար են ճանաչված, ինչպես և խուլ ու համբերը, որոնք ենթակա են խնամակալության: Գ գլխում նշվում է, որ ընտրությունների գործի ղեկավարությունը հանձնվում է Հայաստանի պառլամենտի ընտրությունների կենտրոնական, գավառային, շրջանային, գյուղական և թաղամասային ընտրական հանձնաժողովներին: Սահմանվում են հանձնաժողովների կազմավորման կարգը, նրանց լիազորությունները: Դ գլուխը նվիրված է ընտրողների ցուցակների կազմմանն ու վարմանը, Ե գլուխը՝ թեկնածուների ցուցակներին, Զ գլուխը՝ ընտրատուներ մատուցելու և հաշվարկելու մասին, Է գլուխը՝ ընտրությունների արդյունքների որոշման մասին, Ը գլուխը՝ Հայաստանի պառլամենտից պակասող անդամներին փոխարինելու կարգի մասին, Թ գլուխը՝ ընտրությունների ազատությունը և կանոնավորությունը ապահովելուն, իսկ վերջին Ժ գլուխը՝ Հայաստանի պառլամենտի ընտրությունների կազմակերպման

ծախսերին⁹: Ընտրությունները տեղի են ունեցել 1919 թ. հունիսի 21-23-ին, որին նախապես ցուցակագրված 366 հազար ընտրողներից մասնակցել է 260 հազարը (շուրջ 70 %): Նորընտիր խորհրդարանի 80 պատգամավորից (այդ թվում՝ 3 կին , 12-ը՝ Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Դոնի Ռոստովից, Թիֆլիսից, Բաքվից և Պոլսից) 72-ը դաշնակցականներ էին, 4-ը՝ սոցիալիստ-հեղափոխականներ, 2-ը՝ թուրքեր, 1-ը՝ եզդի և 1-ը՝ անկուսակցական: 1919 թ. օգոստոսի 1-ին գումարվել է նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստը: Բացման ճառով հանդես եկավ ավագ պատգամավոր Ա. Սահակյանը, որն իր ճառում մասնավորապես նշեց. «Այսօր՝ Հայաստանի Խորհրդի բացման տարեդարձին, իրականացած ենք տեսնում ժողովրդի իղձը, ու ես երջանիկ եմ ոգևորված ողջունել մեր առաջին ընտրովի պառլամենտը: Այս մեծ պատմական օրը Հայաստանի Խորհուրդը դադարում է գործելուց ու տեղի է տալիս հանրապետության իսկական և գերագույն տիրոջը, երկրի, Հայաստանի պառլամենտին»¹⁰: Օգոստոսի 5-ի նիստում պառլամենտի նախագահ է ընտրվել Ավետիս Ահարոնյանը, փոխնախագահներ Լևոն Շանթը և Սարգիս Արարատյանը, քարտուղարներ՝ Հ. Տեր-Հակոբյանը և Ա. Սաֆրաստյանը: Օգոստոսի 7-ին վարչապետ է ընտրվում Ալ. Խատիսյանը, որը օգոստոսի 10-ին հայտարարում է կառավարության նոր կազմը: Խատիսյանի կառավարությունը գործել մինչև 1920 թ. մայիսի 5-ը: 1920 թ. մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում հրաժարական տվեց Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը՝ կապված բոլշևիկների մայիսյան ապստամբության հետ: Այդ նույն օրը կազմվել է նոր կառավարություն՝ ՀՅԴ կուսակցության բյուրոյի անդամներից՝ Համազասպ Օհանջանյանի նախագահությամբ: Բյուրո-կառավարությունը գործել է մինչև 1920 թ. նոյեմբերի 23-ը, երբ հրաժարական տվեց Հ. Օհանջանյանի կառավարությունը: Նույն օրը կազմվել է հանրապետության վերջին կառավարությունը՝ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Նոյեմբերի 30-ին Հայաստանում ՌՄՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը դաշնակցական կառավարությանն առաջարկեց խաղաղ ձևով իշխանությունը հանձնել Հեղկոմին: Ելնելով բարդ ու անելանելի վիճակից՝ կառավարությունն ընդունեց այդ առաջարկը և 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ՌՄՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի Հայաստանը հայտարարվեց սոցիալիստական հանրապետություն:

Եվ այսպես, վերոհիշյալից ակնհայտ է, որ Առաջին հանրապետության քաղաքական համակարգի անբաժան մասն է կազմել օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որը ձևավորելիս հաշվի է առնվել պառլամենտարիզմի այն ժամանակվա համաշխարհային փորձը: Պատմաքաղաքական աներևակայելի բարդ ժամանակներում երկուսուկես տարի գոյություն ունեցած Հայաստանի Հանրապետությունը

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, էջ 212-226:

¹⁰ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ (1918-1920), էջ 235:

խորհրդարանական սկզբունքով կառավարվող երկիր էր: Խորհրդարանը միապալատ էր, ուներ մշտական հանձնաժողովներ և ավագների խորհուրդ: Պետության գլխավոր իրավասությունները՝ օրենսդիր, մասամբ նաև գործադիր, պատկանել են խորհրդարանին: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ձևավորվել ու հաստատվել է օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի կողմից և հաշվետու էր նրա առջև: Հանրապետությունում և նրա խորհրդարանում գոյություն է ունեցել բազմակուսակցական համակարգ: Գործել են խորհրդարանական խմբակցություններ, եղել է ընդդիմություն, թույլատրվել է այլախոհություն և այլն: Առաջին հանրապետությունը չհասցրեց ընդունել սահմանադրություն, քանզի դրա և այլ հիմնական օրենքները ծրագրվում էր մշակել և ընդունել Հայկական հարցի վերջնական լուծումից, այսինքն՝ Միացյալ և անկախ Հայաստանի ստեղծումից հետո: Սահմանադրության բացակայության պայմաններում հստակ սահմանազատված չեն եղել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավասության շրջանակները, որի հետևանքով մեկ խորհրդարանն էր մտնում կառավարության լիազորությունների դաշտ, մեկ կառավարությունը՝ խորհրդարանի: Այդ իսկ պատճառով ժամանակի ընթացքում որոշակի հանգամանքների թելադրանքով խորհրդարանի դերը աստիճանաբար նսեմացվեց հոգուտ կառավարության, իսկ 1920 թվականին, բոլշևիկների Մայիսյան ապստամբության կապակցությամբ, արտակարգ իրավիճակի թելադրանքով կառավարությունը յուրացրեց խորհրդարանի օրենսդրական իրավասությունները, և փաստորեն հաստատվեց ՀՅԴ բյուրոկառավարության դիկտատուրա (այսինքն՝ պետական կառավարման համակարգը կուսակցականացվեց), իսկ խորհրդարանն ուղարկվեց շուրջ 7-ամյա հարկադիր արձակուրդի և փաստացի չեզոքացվեց, որն էլ թուլացրեց պետական իշխանության իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական հիմքերը: Հայաստանի հասարակական-քաղաքական համակարգի անբաժանելի բաղկացուցիչն են կազմել հանրապետությունում գործող կուսակցությունները: Քաղաքական կյանքին մասնակցության տեսակետից դրանք կարելի է ստորաբաժանել այսպես՝ կառավարող և ոչ կառավարող կամ խորհրդարանական և ոչ խորհրդարանական: Ժողովրդական սկզբունքներով կազմավորված խորհրդարանում գործում էին չորս քաղաքական կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, սոցիալ-հեղափոխականները և Հայ ժողովրդական կուսակցությունը՝ կազմելով խորհրդարանական խմբակցություններ: Նրանցից Հայ հեղափոխական դաշնակցությունը կառավարող կուսակցություն էր, ուներ խորհրդարանական մեծամասնություն, իսկ մյուսները՝ ընդդիմադիր: Թեև երկրորդ խորհրդարանն ուներ շատ թույլ՝ ընդամենը 8 պատգամավորից կազմված ընդդիմություն, սակայն օրինաստեղծ աշխատանքում աչքի է ընկել ավելի մեծ արդյունավետությամբ և արհեստավարժությամբ: Առաջին հանրապետության գոյության ընթացքում

խորհրդարանում մեծամասնություն կազմող և կառավարող ՀՅԴ խմբակցությունը երկու անգամ կազմել է կոալիցիոն կառավարություն. մի դեպքում՝ ՀՄԿ-ի հետ՝ 1918թ. նոյեմբեր-1919թ. հունիսին, մյուս դեպքում՝ Էսեռների հետ՝ 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Այս կոալիցիաները կարճատև կյանք ունեցան, քանզի չկար ընդհանրություն կոալիցիոն անդամների ծրագրային ու գաղափարական կողմնորոշումների միջև: Բայց դա մի հարկադիր քայլ էր թեկուզ ժամանակավորապես կայունացնելու հանրապետության ներքին և արտաքին կյանքը: Վերջին կոալիցիայի կապակցությամբ վարչապետ Ս. Վրացյանը գրում է. «Ի պատիվ հայ սոցիալիստ-հեղափոխականների՝ Հայաստանի ամենատազնապալի վայրկյանին նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին և, հակառակ ակներև դժվարություններին, մտան կառավարության մեջ»¹¹: Հայաստանի խորհրդարանն ժամանակի հիմնական մասը ծախսում էր ընթացիկ ու անհետաձգելի հարցերի լուծման վրա՝ չկարողանալով ինչպես հարկն է իրեն լիովին դրսևորել: Նա իր կարճատև և ընդհատ գործունեության ընթացքում չհասցրեց մշակել և ընդունել սեփական (ազգային) ամբողջական ու կայուն օրենսդրություն: Սեփական, ազգային առանձնահատկություններին բնորոշ ու հոգեհարազատ օրենքներ շատ քիչ ընդունվեցին ու գործադրվեցին, որոնք էլ բացասաբար անդրադարձան հանրապետության իրավական հիմքերի ամրապնդմանը: Անշուշտ, Հայաստանի խորհրդարանն արհեստավարժ չէր, քանզի ուներ խորհրդարանական աշխատանքների կազմակերպման փորձի մեծ պակաս: Խորհրդարանի և նրա հանձնաժողովների գործունեության թույլ կողմերից մեկն այն էր, որ ընդունված օրենքների ճնշող մեծամասնությունը (շուրջ 90 տոկոս) եղել է կառավարության ներկայացրած օրինագիծ: Օրենքների պակասը և անկատարությունը ծնում էին անիշխանական երևույթներ՝ ալան-թալան, շահատակություններ, «մաուզերիզմ» և այլն: Դրան նպաստում էին նաև հանրապետության արտաքին ու ներքին անկայուն պայմանները, Հայկական հարցի լուծման ձգձգումը: Եվ այսպես, Հայաստանի առաջին Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում, որն ընտրել էր խորհրդարանական կառավարման մոդելը, կազմվել է երկու գումարման խորհրդարան՝ առաջինը, որպես Հայոց ազգային խորհրդի իրավահաջորդ, առանց ընտրությունների, բազմակուսակցական հիմքի վրա՝ Ազգային խորհրդի անդամների թվի համամասնական եռապատկման, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների՝ թուրքերի, ռուսների, եզդիների ներկայացուցիչների հրավիրման միջոցով: Այն գործել է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, իսկ երկրորդը ձևավորվել է համամասնական ընտրությունների միջոցով՝ գործելով 1919թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը: Առաջին խորհրդարանը գումարել է 87 նիստ, իսկ երկրորդը՝ 97: Առաջին գումարման ընթացքում ընդունվել է 427 օրենք,

¹¹ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէրոպ, 1958, էջ 521:

որոնց մի մասը, սակայն, եղել է ընդամենը որոշում և կառավարչական հրահանգ, իսկ երկրորդում՝ 776 օրենք և որոշում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ խորհրդարանը հաճախ օրենքների անվան տակ հրապարակում էր վարչական բնույթի հրահանգներ ու որոշումներ, քանզի նա իրեն վերապահել էր ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմնի, այլև առանձին դեպքերում՝ գործադիր իշխանության իրավասություններ: Եթե անտեսենք այդ վարչական բնույթի որոշումներն ու հրահանգները, ապա Հայաստանի երկու գումարման խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ըստ էության ընդունել են 300-ից ավելի օրենք, որոնք նշանակալից դեր են խաղացել անկախ պետականության կերտման գործում: 1918 թ. ընդունվել է 63, 1919-ին՝ 480, 1920-ին՝ 660 օրենք և որոշում: Առաջին խորհրդարանի 1919 թ. հունիսի 4-ի նիստում վարչապետը հանդես եկավ զեկուցումով մեկամյա գործունեության վերաբերյալ: Իր զեկուցման մեջ նա նշեց, որ «Ապրիլի 17-ի օրենքի համաձայն՝ կառավարությունը հաստատել է 99 օրինագծեր: Դրանցից 71-ը անցյալ դեկտեմբերից մինչև ներկա փետրվարի ժամանակաշրջանում ներկայացվել են խորհրդարանին: Վերջինս միջոց չի ունեցել քննելու: Կառավարությունը քննել, հաստատել է չնչին փոփոխություններով: Մնացածը նոր օրինագծեր են, որոնք վերաբերում են գորքի կազմակերպման, գրաված շրջանների կառավարության ու հանրական կրթության խնդիրներին և միանգամայն անհետաձգելի էին: Նախարարության խորհրդում 96 օրենք անցել է միաձայն: Հաստատված օրենքների ցուցակը ներկայացված է խորհրդարանի նախագահության»¹²: Ի դեպ, այդ նույն նիստում քննարկվում է խորհրդարանի արձակուրդը երկարաձգելու հարցը՝ կապված խորհրդարանի առաջին ընտրությունների հետ: Որոշվում է դադարեցնել խորհրդարանի աշխատանքները մինչև նոր պառլամենտի բացվելը Առաջին խորհրդարանի նախագահն էր՝ Ա. Սահակյանը, իսկ երկրորդին՝ Ա. Ահարոնյանը: Առաջին գումարման խորհրդարանն ունեցել է 15, իսկ երկրորդը՝ 12 մշտական հանձնաժողովներ: Առաջին գումարման մշտական հանձնաժողովներն էին՝ ֆինանսական, օրենսդրական, զինվորական, ինքնավարության, խմբագրական, կարգադրիչ, դպրոցական, պարենավորման, գաղթականական, բժշկա-սանիտարական, հողային, աշխատանքի, մանդատային, նակազի և հարցապնդումների¹³: Երկրորդ գումարման ընթացքում կազմավորվեցին 12 մշտական հանձնաժողովներ՝ օրենսդրական, բյուջետային ու էլևմտական, պարենավորման, ինքնավարությունների, հողային, աշխատանքի և խնամատարության, ներգաղթի և վերաշինության, դպրոցական-կրթական, զինվորական, խմբագրական, բժշկա-սանիտարական և հանրօգուտ ձեռնարկների ու շինությունների: Պառլամենտում գործել է աշխատանքների կազմակերպման ներքին կանոնակարգ (պատվիրաններ), որն ընդունվել է 1918 թ. օգոստոսի 10-ին¹⁴: Այն մշակվեց

¹² Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ (1918-1920), էջ 126:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 93-94:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 558-575:

Ռուսաստանի չկայացած Սահմանադիր ժողովի և Անդրկովկասի սեյմի պատվիրանների օրինակով: Խորհրդարանի ներքին կանոնակարգը բաղկացած է 8 գլուխներից և 201 հոդվածներից, որը կանոնակարգում էր խորհրդարանի կառուցվածքը, նախագահության, հանձնաժողովների ձևավորման ընթացակարգը, օրինագծերի մշակման, քննարկումների ու քվեարկության կարգը և այլն: Առաջին գլուխը նվիրված է Խորհրդի բացմանն ու նրա անդամների լիազորությունների ճանաչմանը՝ մանդատային հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա: Նիստը բացում է Խորհրդի անդամներից տարիքով ավագը, իսկ քարտուղարում է կրտսերը մինչև մշտական նախագահի և քարտուղարի ընտրությունը: Երկրորդ գլուխը նվիրված է Խորհրդի նախագահի, նրա երկու տեղակալների, քարտուղարի և նրա օգնականի ընտրություններին: Երրորդ գլուխը նվիրված է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կազմմանը, նրանց իրավունքներին ու պարտականություններին, նախագահների ու քարտուղարների ընտրություններին, հանձնաժողովների ներքին աշխատակարգին: Օրինաստեղծ աշխատանքները խթանելու նպատակով Խորհուրդը հնարավոր էր համարում նաև համապատասխան ենթահանձնաժողովների ստեղծումը: Չորրորդ գլխի առաջին բաժինը վերաբերում է օրինագծերի քննարկման և քվեարկության կարգին: Քվեարկությունը փակ է (գաղտնի), բայց առանձին դեպքերում՝ անվանական: Քվեարկությունն անցկացվում էր ձայների պարզ մեծամասնությամբ: Բոլոր օրինագծերը քննարկվում են երեք ընթերցմամբ: Ի դեպ, երկրորդից երրորդ ընթերցման տևողությունը պետք է լինի երեք օրից ոչ պակաս, բայց յոթ օրից էլ ոչ ավելի: Առաջին ընթերցման ժամանակ քննարկվում և քվեարկվում են օրինագծի հիմնական սկզբունքները՝ հոդված առ հոդված: Երկրորդ ընթերցման ժամանակ քննարկվում և քվեարկվում են այն հոդվածները, որոնց վերաբերյալ եղել են առաջարկություններ, և որոնք ընդունվել են իրավասու հանձնաժողովի կողմից: Անհետաձգելի համարված օրինագծերի երրորդ ընթերցման ժամանակ առաջարկություններ չեն ընդունվում: Կատարվում են միայն խմբագրական բնույթի փոփոխություններ, որոնք չեն քվեարկվում: Այս գլխի երկրորդ բաժինը վերաբերում է պետական բյուջեի քննարկմանն ու ընդունման կարգին, իսկ երրորդ բաժինը՝ այն հարցերին, որոնք չունեն օրենսդրական բնույթ: Դրանք հիմնականում վերաբերում են պատգամավորների հարցերին և հարցապնդումներին: Պատգամավորներն իրավունք են ունեցել հարցերով և հարցապնդումներով դիմելու կառավարություն, որոնց հերթական նիստերի ընթացքում պատասխանել է վարչապետը կամ համապատասխան ոլորտի նախարարը: Հինգերորդ գլուխը վերաբերում է լիազումար նիստերի անցկացման կարգին՝ օրվա և ժամի նշանակմանը, բացմանը, ընդմիջմանը և փակմանը, էլույթների և հարցերի տևողությանը, որը սահմանում է Խորհուրդը: Ըստ այդմ՝ սահմանվեց նիստերը գումարել պարբերաբար՝ շաբաթը երկու անգամ: Խորհրդի նիստերը բաժանվել են սովորական կամ հերթական և արտահերթ կամ արտակարգ: Վեցերորդ գլուխը վերաբերում է Խորհրդի անդամներին՝

պատգամավորներին, նրանց իրավունքներին և պարտականություններին: Քանի որ պառլամենտը պրոֆեսիոնալ էր, Խորհրդի սահմանած կարգի համաձայն, պատգամավորին արգելվում էր պետական, վճարովի կամ հասարակական այլ պաշտոն վարել: Հետագայում Խորհրդի որոշմամբ նախարարներին ու նրանց օգնականներին (19.09.1919), զորաբանակի մեջ մտած կամավորներին (31.10.1919), դիվանագետներին ու համալսարանի դասախոսներին (01.03.1920) թույլատրվեց պահպանել իրենց պատգամավորական մանդատը, սակայն պառլամենտի նիստերում քվեարկության չէին կարող մասնակցել: Կանոնակարգի յոթերորդ գլուխը վերաբերում է Խորհրդի նախագահության իրավունքներին ու պարտականություններին: Եվ վերջապես, ութերորդ գլուխը վերաբերում է սույն կանոնակարգում (պատվիրաններում) փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կարգին: Նման առաջարկություն իրավունք ունի ներկայացնելու Խորհրդի առնվազն հինգ անդամ. դրա քննարկման համար կազմվում է հատուկ հանձնաժողով: Քննարկումը կազմակերպվում է ընդհանուր հիմունքներով: Հայաստանի խորհրդարանն իր կարճատև գոյության ընթացքում, առաջնորդվելով վերոհիշյալ կանոնակարգով, որպես իր հիմնական գործառույթ, հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ ընդհանուր առմամբ ընդունեց 1203 օրենքներ և օրենսդրական ուժ ունեցող իրավական ակտեր՝ որոշումներ, կարգադրություններ, հրահանգներ: Առաջին աշխարհամարտից հետո ավերված ու քայքայված երկրի սոցիալական, տնտեսական, գիտամշակութային և լուսավորական, պետական շինարարության կյանքին վերաբերող հարցերն անցել են խորհրդարանի քննարկման և համապատասխան օրենք կամ որոշում ընդունելու ճանապարհով: Ուշագրավ են հայերենը պետական լեզու հռչակելու, պետական համալսարան, դպրոցներ, գրադարաններ, թանգարաններ հիմնելու, գաղթականության, բանվորների աշխատավարձերը, թոշակներն ավելացնելու, ազատագրական կռիվներում զոհվածների երեխաների ուսուցումը կազմակերպելու, հայ գրողներին, գիտնականներին նյութական օգնություն ցուցաբերելու, արտասահմանում սովորող երիտասարդությանը նպաստներ հատկացնելու և բազմաթիվ մեծ ու փոքր, սակայն էական խնդիրների ուղղությամբ կատարված քայլերը: Բայց մինչ այդ՝ 1918թ. դեկտեմբերի 6-ին, Հայաստանի պառլամենտն ընդունեց օրենք՝ «Նախկին Ռուսական կայսրության օրենքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա». Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես գործում են նախկին Ռուսական կայսրության օրենքները՝ Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ընդունած օրենքները՝ փոփոխություններով ու լրացումներով: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես (որոշ փոփոխություններով ու լրացումներով) ղեկավարվել է հիմնականում Ռուսական կայսրության «Հավաք օրինաց»-ով: Հետագայում երկիրն աստիճանաբար սկսել է կառավարվել իր խորհրդարանի ընդունած օրենքներով և որոշումներով:

Խորհրդանշական է, որ իշխանության առաջին իսկ ամիսներից Հայաստանի պառլամենտն առաջնահերթ ամենահոգատար վերաբերմունքն սկսեց ցուցաբերել կրթության ու լուսավորության գործին: «Երևանի ուսուցչական սեմինարիայի և նրան կից սկզբնական դպրոցի մասին» (22.08.1918) օրենքով Երևանի ուսուցչական սեմինարիան փակվեց, և աշակերտները համապատասխան պայմաններով տեղափոխվեցին գիմնազիա: «Դպրոցների կառավարման մասին» (11.09.1918) օրենքով ընդունվեց, որ դպրոցը Հայաստանի Հանրապետության մեջ պետության մենաշնորհը չէ: Յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն, ինչպես և առանձին անհատ, իրավունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով: Սույն օրենքով սահմանվում է այդ կարգը: «Դպրոցների դիրեկցիայի վերացման մասին» (24.09.1918) օրենքով վերացվում է ժողովրդական դպրոցների դիրեկցիան, և նրա կրեդիտները, գործերը, վավերաթղթերը և գույքը հանձնվում են Հանրային կրթության մինիստրություն: «Գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին» (05.01.1920) օրենքով ժողովրդական կրթությանը նպաստելու համար հիմնվում են՝ ա) անգրագետ հասակավորների համար՝ գրագիտական դասընթացներ, բ) թերավարժ հասակավորների համար՝ գրավարժական դասընթացներ և գ) գրագետ հասակավորների համար՝ ժողովրդական համալսարաններ: Դասընթացներից յուրաքանչյուրի համար առարկաների ցանկը, ծավալը, ծրագրերը, ժամաքանակը սահմանում է Հանրային կրթության և արվեստի նախարարությունը: Դրանք անվճար են, և դասընթացներին կարող է հաճախել ամեն ոք՝ առանց կրոնի, ազգի ու սեռի խտրականության: 1919թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Պետական լեզվի մասին» օրենքով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է և պարտադիր գործի և բոլոր պետական և հասարակական հաստատությունների համար: Այլ լեզուների գործածությունը պետական և հասարակական հիմնարկներում սահմանվում է հատուկ օրենքով: Պետական և հասարակական հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել գործավարության լեզու: 1919թ. մայիսի 16-ին ընդունված՝ «Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300 000 ռ. հատկացնելու մասին» օրենքով որոշվեց 1919/20 ճեմարանական տարում Երևանում բացել համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմա-լեզվաբանական, բ) տնտեսական-իրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժիններով: Որոշվեց առաջին հերթին բանալ պատմա-լեզվաբանական բաժինը, մնացածի հերթը պետք է սահմաներ Մինիստրների խորհուրդը՝ ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության: «Երևանի Համալսարանի մասին, Երևանի Համալսարանի ժամանակավոր կանոնները» (08.07.1919) լրացուցիչ օրենքով հաստատվում են Երևանի Համալսարանի ժամանակավոր կանոնները, որով համալսարանը պետք է լինի

գիտական և ուսումնական հաստատություն, ենթակա Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը: Դասավանդումը կարող է լինել թե՛ հայերեն և թե՛ այլ լեզուներով: Համալսարանի տեսուչին հաստատում է Մինիստրների խորհուրդը՝ Հանրային կրթության և արվեստի մինիստրի առաջարկությամբ: Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ կրթությամբ անհատներ, առանց սեռի խտրականության: «Երևանի համալսարանի մասին» (17.07.1919) օրենքով որոշվեց 1919թ. աշնանից բացել Երևանի համալսարանի պատմա-լեզվաբանական և իրավաբանական ֆակուլտետները, իսկ «Համալսարանի բժշկական ֆակուլտետի մասին» (18.11.1920) օրենքով՝ նաև բժշկական ֆակուլտետը: Ռոճիկների համար ընդունվել են հետևյալ չափերը. ա) պրոֆեսորին՝ մինիստրական, բ) դոցենտին՝ մինիստրի օգնականի և գ) պրիվատ-դոցենտին՝ բաժանմունքների կառավարչի ռոճիկ: Հանձնարարվում է համալսարանի տեսչին և Հանրային կրթության մինիստրին մշակել ուսանողների կողմից համալսարանին վճարվելիք ուսման վարձի քանակը և ձևը: Միաժամանակ համալսարանի կառավարման ժամանակավոր կանոնների և մշտական կանոնադրության մշակումը հանձնարարվում է համալսարանի տեսչին: 1920թ. նոյեմբերի 18-ին ընդունվեց «Համալսարանի ժամանակավոր կանոնների մասին» օրենքը: 1920թ. հուլիսի 30-ի «Համալսարանի շտատները հաստատելու մասին» օրենքով հաստատվեցին համալսարանի պատմա-լեզվաբանական և իրավագիտական ֆակուլտետների, համալսարանի դիվանի և գրադարանի հաստիքները: «Հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին օգնություն հատկացնելու համար 100.000ռ. հատկացնելու մասին» օրենքով (07.07.1919) թույլատրվեց Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը բանալ 100.000 ռուբլու վարկ՝ հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին Հայ գրողների կովկասյան ընկերության միջոցով օգնություն հասցնելու համար: Օգնություն ստանում են ոչ միայն ընկերության անդամները, այլև հայ իրականության մեջ աշխատող մտավորականները: 1919թ. մայիսի 5-ին ընդունված՝ «Օրենքները հաստատելու օրից ուժի մեջ մտցնելու մասին» օրենքով սահմանվեց, որ օրենքներն ուժի մեջ են մտնում հաստատման օրվանից: «Օրենքները պահելու և հրապարակելու մասին» օրենքով (24.09.1918) կարգավորվում է օրենքների վավերացման ու հրապարակման կարգը: Օրենքների բնօրինակները պահվում են Հայաստանի Խորհրդում: Օրենքի բնօրինակը Հայաստանի Խորհրդի հաստատած վերջնական բնագիրն է՝ վավերացված Խորհրդի նախագահի և ավագ քարտուղարի ստորագրություններով: Հայաստանի Խորհրդի կողմից հաստատվելուց հետո օրենքի պատճեն օրինակները, վավերացված Խորհրդի ավագ քարտուղարի կողմից, Խորհրդի նախագահի կարգադրությամբ ուղարկվում են «Օրենքների հավաքածուում» տպագրվելու և հրատարակվելու: «Կառավարության կողմից պառլամենտ մտցվող օրենքների ձևի մասին» օրենքով (28.11.1919) սահմանվում է, որ կառավարության կողմից Հայաստանի պառլամենտ մտցվող յուրաքանչյուր օրինագիծ պետք է

պարունակի վարչապետի և համապատասխան մինիստրի, իսկ ֆինանսական բնույթ ունեցող օրինագծերը՝ նաև ֆինանսների մինիստրի ստորագրությունը: «Ուժի մեջ մտնելու ժամանակի մասին» օրենքով (24.12.1919) յուրաքանչյուր օրենք գործադրության մեջ է մտնում Երևանում «Օրենքների հավաքածուի» մեջ հրապարակվելու հինգերորդ օրը, իսկ հանրապետության մնացած վայրերում՝ տասնհինգերորդ օրը: Առանձին դեպքերում, պառլամենտի հատուկ որոշմամբ, օրենքը գործադրության մեջ է մտնում այդ օրենքով սահմանված ժամկետից սկսած և նույն օրենքում հիշատակված ձևով՝ անկախ «Օրենքների հավաքածուի» մեջ հրապարակվելուց: Դատաիրավական ոլորտում ընդունվեց «Քրեական դատավարության կանոնադրության մի քանի հոդվածների փոփոխման մասին» օրենքը (28.09.1918թ.), որով տրվում է վկաների երդում տալու կարգը: Ըստ այդ օրենքի՝ վկաները երդում են տալիս դատարանի նիստին, յուրաքանչյուրն իր դավանության ծեսով և հոգևորականի միջոցով: Երդումից ազատվում էին՝ 1) քրիստոնեական բոլոր դավանանքների սրբազնագործ պաշտոնյաները և կրոնավորները, 2) երդում չընդունող դավանությունների ու կրոնների պատկանող, ինչպես և համոզմունքով երդում մերժող անձերը. երդման փոխարեն սրանք խոստում են տալիս վկայել լրիվ ճշմարտությունը խղճմտանքով: Երբ դատարանի նիստի վայրում բացակա է վկայի դավանության հոգևորականը, վկային երդվել է տալիս դատարանի նախագահը: Մանրամասն դատավճիռը պետք է կազմի դատարանի անդամներից մեկը, նախագահի նշանակումով, նույն դատավճռի էության հայտարարումից առավելագույնը 5 օրվա ընթացքում : «Դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին» օրենքով (23.10.1918) պետական հիմնական բոլոր օրենքներում «Կայսեր», «Կայսերական մեծության» բառերը փոխարինվում են «Հայաստանի Հանրապետություն» բառերով, որի հիման վրա էլ Քրեական դատավարության օրենքի համապատասխան հոդվածը գրվում է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր գործի դատավճիռը կազմվում է առանձին և գրվում է սահմանված ձևով՝ հանուն Հայաստանի Հանրապետության»: Քաղաքացիակա ն դատավարության օրենքում «ըստ հրամանի Նորին Կայսերական մեծության» բառերը փոխարինվում են «Հանուն Հայաստանի Հանրապետության» բառերով: «Վարչական գործերին վերաբերող դատարանների մասին» օրենքով (08.12.1918) այն գործերը, որոնք ենթակա էին միանձնյա վարչական դատավորին, քննում են հաշտարար դատավորները: «Սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում» օրենքով (06.12.1918) Երևանում բացվեց դատաստանական ատյան երկու դեպարտամենտով՝ քաղաքացիական և քրեական: Այստեղ բացվեց սենատ՝ բաղկացած երկու վճռաբեկ դեպարտամենտից՝ քաղաքացիական և քրեական որոշումները բեկանելու խնդիրների վերաքննության համար: «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքով (06.12.1918) սահմանվում են երդվյալ ատենակալների ինստիտուտը և ձևավորման կարգը: «Ժամանակավոր օրենք

պաշտոնյաների հանցանքների մասին» օրենքով (02.10.1920) սահմանվեցին այն հնարավոր հանցանքները, որ կարող են կատարել պաշտոնյաները, ինչպես նաև դրանց համարժեք պատժաչափերը: «Մասնավոր սեփականություն կազմող զենքի և զինամթերքի պետականացման մասին» (29.08.1918) օրենքով սահմանվեց Հայաստանի Հանրապետության սահմաններում մասնավոր սեփականություն կազմող զենքի և զինամթերքի գրավման ու հանձնման կարգը, մինչև որ Հայաստանի Խորհուրդը կսահմանի զենք ունենալու ու կրելու կարգը: Յուրաքանչյուր շրջանում կազմվում էին հատուկ հանձնախմբեր հավաքվելիք զենքը և զինամթերքը ստանալու և ցուցակագրելու համար, ինչպես նաև սահմանվում է որոշակի ժամանակահատված: Որոշված ժամանակահատվածում կամովին չհանձնված զենքը և զինամթերքը գրավում են հարկադրական միջոցներով, իսկ պարտագանգ զինատերերը ենթարկվում են պատժի: Յուրաքանչյուր ստացված զենքի և զինամթերքի համար հանձնախումբը զինատիրոջը տալիս է կնքված ստացագիր: Ներքին գործերի մինիստրին վերապահվում է առանձին դեպքերում հատուկ վկայագրով թույլատրել մասնավոր անձերի և հիմնարկների՝ զենք և զինամթերք ձեռք բերելը և կրելը: Ընդունվեց «Միլիցիայի ժամանակավոր օրենքը»՝ հաստատված Ժամանակավոր կառավարության կողմից 1917թ. ապրիլի 17-ին և Հայաստանի պառլամենտի կողմից փոփոխված 1920թ. ապրիլի 21-ին: Օրենքով միլիցիան պետական իշխանության գործադիր օրգանն էր քաղաքներում ու գավառներում և քաղաքների ու գավառների ինքնավարությունների անմիջական տնօրինության ներքո էր: Օրենքով սահմանվում է ին գավառական ու քաղաքային միլիցիայի կազմը, միլիցիայի պաշտոնյաներին ընդունելու և արձակելու կարգը, միլիցիայի տնօրինության ենթակա խնդիրներն ու իշխանության աստիճանը, միլիցիայի աստիճանավորների փոխհարաբերությունները, գործունեության ու գործավարության կարգերը, միլիցիայի պաշտոնյաների հաշվետվությունն ու պատասխանատվությունը: Վարչատարածքային բաժանման ոլորտում ընդունվեց «Միացյալ Հայաստանի անկախության ակտը հայտարարելու մասին» օրենքը (26.05.1919), որով 1919թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձին Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացված են իբրև անկախ պետական միություն: Օրենքում նշվում է, որ ուղիղ մեկ տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն Անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությունների ներկայացուցիչներին հայտնելուց հետո այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում: 1919թ. փետրվարին Երևանում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր հայտարարեց, որ Հայաստանը անկախ ու միացյալ է ճանաչում: Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ միացյալ Հայաստանի

պետական ձևն է Ռամկավար հանրապետությունը, և որ ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի պառլամենտն ու կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր ու գործադիր իշխանությունը: Նշվում է, որ Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է պառլամենտի՝ 1919թ. ապրիլի 27-ի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա: Այս որոշումը վտանգավոր համարելով՝ Հայ ժողովրդական կուսակցության 4 նախարար դուրս է գալիս կառավարության կազմից: «Հայաստանի ներկա տերիտորիայի չորս նահանգների սահմանների մասին» օրենքով (25.05.1920) Հայաստանի այն ժամանակվա տարածքը բաժանվեց չորս նահանգների: Արարատյան նահանգի մեջ մտնում էին Երևանի, Սուրմալուի, Նոր-Բայազետի, Դարալագազի, Շարուրի ու Նախիջևանի գավառներն ամբողջապես և Էջմիածնի գավառն առանց Թալինի գավառակի: Նահանգի կենտրոնն էր Երևանը: Շիրակի նահանգի մեջ մտնում էին Էջմիածնի գավառի Թալին գավառակը, Ալեքսանդրապոլի, Ղարաբաքիլիսայի գավառներն ամբողջությամբ, Ղարսի գավառի որոշ մասեր, Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայկական մասերը և Դիլիջանի գավառը: Կենտրոնը Ալեքսանդրապոլ քաղաքն էր: Վանանդի նահանգի մեջ էին Ղարսի նախկին շրջանը: Կենտրոնն էր Ղարս քաղաքը: Սյունյաց նահանգի մեջ էին Զանգեզուրը և Ղարաբաղը, Վարանդան, Գյուլիստանը, Դիզակը, Ջրաբերդը և Գանձակի գավառի հայկական մասերը: Սոցիալական ոլորտում ընդունվեցին մի շարք հրատապ ու անհետաձգելի օրենքներ: «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության մասին» օրենքով (11.10.1918) Հայաստանի սահմաններում բոլոր գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության գործը պետությունը վերցնում է իր վրա, որի անմիջական վարումը հանձնվում է Հանրային խնամատարության մինիստրին: Յուրաքանչյուր ինքնավարության մարմին, հասարակական կազմակերպություն, ինչպես և մասնավոր անհատ իրավունք ունեն բանալու ու պահելու որբանոց, սակայն պետության հսկողության ներքո: Որբերին խնամելու և դաստիարակելու համար հիմնվում են անհրաժեշտ թվով որբանոցներ: Որբանոցում ընդունվում են մինչև տասնհինգ տարեկան երեխաները, որոնք զուրկ են ծնողներից կամ խնամակալներից: Տասնհինգ տարին լրացած որբերի համար յուրաքանչյուր որբանոցի վարչություն հայթայթում է համապատասխան աշխատանք: «Հպատակության օրենքի հիման հողվածներ» օրենքի (06.07.1920) համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ճանաչվում ամեն մի նախկին ռուս և տաճկահպատակ, որն այս օրենքի հաստատման ժամանակ ապրում էր Միացյալ Հայաստանի սահմաններում: Միացյալ Հայաստանի սահմաններում ապրող նախկին ռուս և տաճկահպատակները իրավունք ունեն այդ օրենքի հրատարակման օրից երեք ամսվա ընթացքում հրաժարվել Հայաստանի Հանրապետության հպատակությունն ընդունելուց՝ խնդիր ներկայացնելով տեղական

հաշտարար դատավորին: Հպատակությունն ընդունելուց հրաժարվող անձինք պարտավոր են հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից: Հայաստանի Հանրապետության հպատակ են ճանաչվում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնվել են Միացյալ Հայաստանի տարածքում, սակայն ապրում են Հայաստանի սահմաններից դուրս, եթե այդպիսիները տվյալ օրենքի հրատարակումից հինգ տարվա ընթացքում Ներքին գործերի նախարարություն ներկայացնեն հայտարարություն իրենց հպատակ արձանագրվելու մասին: Օտար պետությունների հայ ծագում ունեցող բոլոր հպատակները և կամ այդ պետությունների քաղաքացիություն ձեռք բերողները իրավունք ունեն իրենց կամ իրենց ոչ չափահաս երեխաների անունից օրենքի հրատարակումից հինգ տարվա ընթացքում հայտարարելու իրենց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելու մասին՝ ներկայացնելով դրա առթիվ համապատասխան հայտարարություն երկու պետությունների ձեռահաս հաստատություններից: «Տեղական ինքնավարությունների հողերը կապալով տալու մասին» օրենքով (11.10.1918) միջնորդ կապալառուների կողմից գյուղացիների շահագործումը վերացնելու համար Հայաստանի Խորհուրդը որոշեց, որ տեղական ինքնավարությունները տալիս են իրենց պատկանող վարելահողերն ու խոտհարքները կապալով անմիջապես հողի կարիք ունեցող և այն սեփական աշխատանքով մշակող անհատներին կամ արհեստավորական ընկերություններին: Ֆինանսաբյուջետային և տնտեսական ոլորտում՝ «1919թ. ֆինանսական նախահաշիվների և պետական ել և մուտի տախտակը կազմելու, քննելու և հաստատելու մասին» (03.01.1919) և «1920թ. ֆինանսական նախահաշիվները և պետական ելևմտացույցը կազմելու, քննելու և հաստատելու մասին» (07.01.1919) օրենքներով սահմանվում են պետական բյուջեի տարեկան նախագծերը կազմելու, ներկայացնելու, քննարկելու և հաստատելու կարգերը: Սահմանվում է, որ յուրաքանչյուր մինիստրություն ել ու մուտքի նախահաշիվների նախագծերն ուղարկում է ֆինանսների մինիստրություն. ընդհանրացնելով այդ՝ ֆինանսների նախարարը նախարարների խորհուրդ է ներկայացնում պետական ելևմտացույցը ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 15-ը: Նախարարների խորհրդի կողմից հավանություն ստացած պետական ելևմտացույցի նախագիծը հրատարակվում է անմիջապես: Ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 20-ը առաջարկվում է Հայաստանի պառլամենտի քննությանը: Խորհրդարանի հաստատումից հետո պետական ելևմտացույցը պաշտոնապես հրատարակվում է 10 օրվա ընթացքում:

Ընդունվեցին «Ոգելից խմիչքների և խաղողի գինիների ակցիզի ավելացման» (28.09.1918), «Հողային առանձին տուրքի մասին» (25.10.1918), «Արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին» (06.11.1918), «Գարեջրի ակցիզը բարձրացնելու մասին» (28.11.1919), «Մրգողիի և կոնյակի արդյունաբերության վերաբերյալ անակցիզ հատկացումների վերացման մասին» (28.11.1919), «Դատարկ

զլանակների (գիլգի) և ծխախոտի թղթի ակցիզը ավելացնելու մասին» (05.05.1919), «Խմիչքների և ծխախոտի արտոնագրերի արժեքի բարձրացման մասին» (28. 11.1919), «Անշարժ կայքերի պետական տուրքի մասին» (01.07.1920), «Արտասահմանից Հայաստան ներմուծվող ապրանքների մաքսային ժամանակավոր սակագների մասին», «Հայաստանից արտասահման արտահանվող ապրանքների սակագների մասին» (07.07.1920) և այլ օրենքներ: Ընդունվեց «Բամբակի մենավաճառության մասին» օրենքը (11.09.1918), որով հանրապետության տարածքի վրա բամբակի առևտուրը հայտարարվեց պետության մենաշնորհ: Արգելվեց Հայաստանի Հանրապետության սահմաններից բամբակի արտահանումը: Ակցիզային վարչության վրա դրվեց պարտականություն՝ հարկի տակ առնել գոյություն ունեցած ամբողջ բամբակը: Առողջապահության ոլորտում ընդունվեց «Խոլերայի դեմ կռվելու մասին» օրենքը (21.08.1918), որով Հայաստանի ողջ տարածքը հայտարարվեց խոլերայի կողմից վտանգված: Ըստ այդմ՝ ընդունվեց, որ Հայաստանի խորհրդի բժշկասանիտարական մասնաժողովը վարակիչ հիվանդությունների դեմ մաքառող բոլոր հիվանդությունների վրա հսկող ամենաբարձր մարմինն է: «Պետական հիմնարկություններում աշխատանքի ժամեր սահմանելու մասին» օրենքով (14.05.1919) գրասենյակներում սահմանվեց վեցժամյա աշխատանք: Աշխատանքներն ամռան ամիսներին սկսվում են առավոտյան ժամը 8:30-ին և ավարտվում կեսօրին՝ 2.30-ին, իսկ ձմեռը՝ ժամը 9-3-ը: 1919 թ. հունվարի 17-ին ընդունվում է օրենք «Տոներ սահմանելու մասին»: Սահմանվել են հետևյալ ազգային և պետական տոները՝ Նոր տարի, Սուրբ Ծնունդ և Մկրտություն, Մեռելոց (հունվարի 1, 5, 6, 7), Տյառնընդառաջ (փետրվարի 14), ապրիլի 7, Վարդանանց ու Բարեկենդանի հինգշաբթի և շաբաթ, Լուսավորչի մուտն ի Վիրապի շաբաթ ավագ շաբաթ, Խաչի մեռելոցի երկուշաբթի, Համբարձման ու Թարգմանչաց շաբաթ և բոլոր կիրակի օրերը: Ռուսների ու մահմեդականների համար սահմանվեցին իրենց ազգային ու կրոնական տոները¹⁵: Ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում առաջնակարգ խնդիր էին զինված ուժերի վերակազմավորումը և ազգային բանակի ստեղծումը: Ընդունված օրենքների հիման վրա 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին կազմավորված հայկական առանձին բանակային կորպուսն արմատապես վերակառուցվեց: 1918 թ. սեպտեմբերին այն լուծարվում է, և կազմավորվում դիվիզիա՝ գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: 1919 թ. ապրիլի 25-ին ստեղծվում է զինվորական խորհուրդ՝ գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ, որն ստանձնեց նաև բանակի սպարապետությունը: 1919 թ. հայկական բանակը վերակառուցվեց զորքերի կառավարման համար ավելի հարմար միավորների՝ բրիգադների և գնդերի: Հուլիսին ՀՀ զինված ուժերը բաղկացած էին 2 -ական գունդ ունեցող 3 հետևակային բրիգադներից, դեռևս ձևավորվող 2 հեծյալ գնդերից, տեղական

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ (1918-1920), էջ 160:

նշանակության և առանձին զորամասերից, հրետանային մարտկոցներից և 1 զրահագնացքից: Ջորջի քանակը հասնում էր 18 հազարի: Հայկական բանակում ծառայել է ավելի քան 400 այլազգի սպա (հիմնականում՝ ռուսախոս): 1919 թ. մայիսի 26-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվում է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» շքանշանը, 1920 թ. հունիսի 2-ին՝ «Մուրբ Վարդան Ջորավար» ու «Մեծն Տրդատ» շքանշանները: Օրենսդրական դաշտի ստեղծման և կառավարության կազմակերպական ծավալուն աշխատանքի շնորհիվ՝ 1920 թ. աշնան և արդեն հայկական բանակի թիվը 18.000 զինվորից աճել էր 40.000-ի: Հայաստանի բանակը ապաքաղաքականացված էր: Օրենքով այնտեղ արգելվում էր որևէ կուսակցական կառույցի գոյություն: ՀՀ ընտրությունների մասին օրենքով իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողներն իրավունք չունեին մասնակցելու ոչ մի կարգի ընտրությունների: Դա արվում էր բանակը ապակուսակցականացնելու և զինվորականությանը քաղաքական պայքարից հեռու պահելու նպատակով: Խորհրդարանը 1920 թ. ընդունել է նաև Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը, որոնք հետագայում դարձել են նաև Հայաստանի երրորդ հանրապետության պետական խորհրդանիշներ: 1918 թ. օգոստոսին Հայաստանի ազգային դրոշ ընդունվեց եռագույնը (կարմիր, կապույտ, նարնջագույն), ինչպես նաև օրհներգը՝ Միքայել Նալբանդյանի «Մեր հայրենիք» երգը, որի երաժշտության հեղինակն էր Բարսեղ Կանաչյանը, ըստ այլ կարծիքի՝ Կարա-Մուրզան: 1920 թ. հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ զինանշանը, որը հեղինակել էին Ալեքսանդր Թամանյանը և Հակոբ Կոջոյանը: Հայաստանի խորհրդարանն ունեցել է պաշտոնական հրատարակություն՝ «Կառավարության լրաբեր» եռօրյա թերթը, որը լույս տեսնել 1918 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1920 թ. հուլիսի 20-ը: Պաշտոնական օրգանի հիմնական նպատակը խորհրդարանի ընդունած օրենքների և կառավարության օրենսդրական ակտերի, որոշումների ու հրամանների հրապարակումն ու տարածումն էր: Խորհրդարանը քննարկել և հաստատել է տարեկան բյուջեն, մասնավորապես՝ 1919 և 1920 թթ. տարեկան բյուջեները¹⁶: Քննարկել և հաստատել է նախորդ տարվա բյուջեի հաշվետվությունը: Խորհրդարանին կից գործել է պետական վերահսկողության մարմին: Այն պատասխանատու էր միայն խորհրդարանի առաջ և նրա անունից վերահսկում էր գործադիր իշխանության՝ կառավարության տնտեսական, ֆինանսավարկային, բյուջետային և այլ գործունեությունը և միանգամայն անկախ էր նրանից: Խորհրդարանի իրավասության մեջ էր նախարարների խորհրդի (արդարադատության նախարարի) ներկայացմամբ սենատի, դատաստանական պալատի և շրջանային դատարանների նախագահների ու անդամների, ինչպես նաև դատախազների ու նրանց տեղակալների հաստատումը: Բացի դրանից, խորհրդարանին էին վերապահված դատական

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պալամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, էջ 31-33:

վճիռներով (կարգով) դատապարտյալներին ներում շնորհելը, նրանց գործերը վերաքննության տալը, քրեադատավարության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու իրավունքը: Ներում շնորհվել կամ պատիժը մեղմացվել է անհատական և որոշակի կատեգորիայի դատապարտյալների: Հիշատակության է արժանի Հայաստանի անկախության առաջին տարեդարձի կապակցությամբ խորհրդարանի 1919թ. հուլիսի 8-ի՝ «Լրացուցիչ օրենք՝ մայիսի 28-ի ներման հրովարտակի» օրենքը: Խորհրդարանն էր նշանակում վարչապետին ու նրա կառավարության կազմին: Նախատեսվում էր նաև կառավարության վստահության քվեի, ինչպես և հրաժարականի հարցի քննարկումը, որոնք, ի դեպ, երկուսն էլ դրսևորվել են Առաջին հանրապետության քաղաքական կյանքում: Որպես օրենսդիր մարմին՝ խորհրդարանը վավերացնում էր Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերը, համաձայնագրերը, որից հետո դրանք ստանում էին իրավական ուժ: Խորհրդարանը լիազորում էր կառավարությանը ուրիշ պետությունների հետ վարել բանակցություններ, կնքել միջպետական պայմանագիր-համաձայնագրեր, հաստատել դիվանագիտական ներկայացուցչություններ (միսիաներ) ու պատվիրակություններ: Խորհրդարանն իր գոյության ընթացքում ձևավորել է չորս կառավարություն: Հայաստանի առաջին կառավարության վարչապետն էր Հովհաննես Քաջազունին (Իգիթխանյանը), որը պաշտոնավարել է 07.06.1918-07.08.1919 թթ., երկրորդինը՝ Ալեքսանդր Խատիսյանը՝ 07.08.1919-05.05.1920 թթ., երրորդինը՝ Համազասպ (Համո) Օհանջանյանը՝ 05.05.1920-23.11.1920թթ., չորրորդինը՝ Սիմոն Վրացյանը՝ 23.11.1920-02.12.1920թթ.: 1918 թ. հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը հրապարակեց կառավարության առաջին կազմը՝ Վարչապետ՝ Հովհաննես Քաջազունի, Ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, Արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, Ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, Պաշտպանության նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, Արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան: Խորհրդի նախագահներ (խոսնակներ)՝ Ավետիք Սահակյանը պաշտոնավարել է 01.08.1918-05.08.1919թթ., Ավետիս Ահարոնյանը՝ 05.08.1919-04.11.1920թթ., Հովհաննես Քաջազունին (Իգիթխանյան)՝ 04.11.1920-02.12.1920 թթ.: Փոխնախագահներ (փոխխոսնակներ)՝ Գրիգոր Տեր-Խաչատրյանը պաշտոնավարել է 01.08.1918-05.06.1919թթ., Դավիթ Ջուբյանը՝ 01.08.1918-05.06.1919թթ., Լևոն Շանթը՝ 01.08.1919-02.12.1920թթ., Սարգիս Արարատյանը՝ 01.08.1919-10.08.1919թթ., Հովսեփ Արդուրյանը (Խանասորի Իշխան)՝ 10.08.1919-16.09.1919թթ., Սիրական Տիգրանյանը՝ 16.09.1919-02.12.1920թթ., Ավետիք Սահակյանը՝ 06.11.1919-02.12.1920թթ.: Ավագ և կրտսեր քարտուղարներ՝ Ավագ քարտուղար Պետրոս Ջաքարյանը պաշտոնավարել է 01.08.1918 - 05.08.1919 թթ. , Կրտսեր քարտուղար Եփրեմ Սարգսյանը՝ 06.08.1918-05.08.1919թթ., Ավագ քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ)՝ 05.08.1919-02.12.1920թթ., Կրտսեր քարտուղար Արամ Սաֆարյանը՝ 05.08.1919-02.12.1920թթ.,

Կրտսեր քարտուղար Անուշավան Տեր-Միքայելյանը՝ 26.12.1919 - 02.12.1920թթ.: Ամփոփելով ասվածը՝ կարելի է հպարտությամբ արձանագրել, որ Առաջին հանրապետությունը կազմակերպված պետություն էր իրեն բնորոշ գրեթե բոլոր անկապտելի հատկանիշներով՝ դրոշով, զինանշանով, օրհներգով, բանակով, դիվանագիտական կապերով, դրամանիշով, ազգային պետական կրթական ու մշակութային օջախներով և այլն, որոնք սահմանվել և գործողության մեջ են դրվել խորհրդարանի ընդունած համապատասխան օրենքներով: Այսինքն՝ Հայաստանի պետականության հիմքերի ստեղծմանն ու ամրակայմանն զգալի չափով օժանդակել է նրա խորհրդարանը: Ձուր չէ, որ արդեն իսկ Հայաստանի խորհրդարանի երկրորդ գումարման բացման իր ճառում նախագահող ավագ պատգամավոր, առաջին գումարման խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանը խորհրդարանի կազմավորումից ուղիղ մեկ տարի անց նշում է. «Այո, այժմ մենք ունենք կազմակերպված պետություն, որը ստեղծել ենք դժոխային արտաքին ու ներքին պայմաններում համարյա ոչնչից, ավերված, թալանված ու հիմնահատակ եղած երկրում՝ շնորհիվ միայն հայ ժողովրդի հրաշալի շինարար հանճարի, անսպառ կորովի: Մենք պարծենում ենք մեր նորածին պետությունով, գուցե նա թույլ է դեռ, հեռու կատարելությունից և ամբողջացած չէ իր տերիտորիայով, սակայն ժողովուրդը սիրում ու փայփայում է իր մատաղ հանրապետությունը, նա ընդգրկել է պետականության գաղափարը, նրա մեջ մարմնացել է անկախության զգացմունքը, որից նա երբեք չի բաժանվել և ոչ ոքի չի զիջել»¹⁷: Իսկապես, չնայած կարճ կյանքին, Առաջին հանրապետության դերը անգնահատելի է պետականությունը վերագտնելու գործում: Անգնահատելի է նաև աներևակայելի կարճ ժամանակամիջոցում, բացարձակ դատարկ տեղում պետական կառույցների, այդ թվում՝ Հայաստանի խորհրդարանի ստեղծումը: Վերոշարադրյալը մեզ լիակատար հիմք է տալիս պնդելու, որ վերջինս իր ձևով ու բովանդակությամբ՝ կազմավորման սկզբունքներով, կառուցվածքով, հիմնական գործառույթներով, լիովին համապատասխանում էր պառլամենտարիզմի ժամանակի բոլոր չափանիշներին: Այս ամենով հանդերձ, սակայն, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պետական շինարարության, քաղաքական կյանքում և բուն խորհրդարանի գործունեության մեջ տեղի ունեցան վրիպումներ: Այսպես, խորհրդարանի ողջ դրական գործունեության մեջ դրսևորվեցին նաև մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող արատավոր երևույթներ: Ամենաառաջինն ու գլխավորը թերևս այն էր, որ կառավարող ՀՅԴ-ն ստեղծել էր միակուսակցական կառավարում՝ կուսակցական դիկտատուրա: Ակնհայտորեն ոտնահարվում էին ընդդիմության վերաբերյալ ժողովրդավարության ընդունված չափանիշները: Այս համատեքստում ամեննին էլ պատահական չպետք է համարել Հովհ. Քաջագունու այն

¹⁷ Նույն տեղում, էջ 234:

պնդումը, թե «Պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձեռք էր առանց պարունակութեան»¹⁸: Այն փաստը, որ իրական ընդդիմությունը ոչ միայն չափազանց թույլ էր, այլև հանիրավի անտեսվում էր ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության և պետական այրերի կողմից, բացասական մեծ հետք է թողել հանրապետության քաղաքական համակարգի գործունեության վրա: Առաջին հանրապետության լեգիտիմ խորհրդարանի գործունեության ընթացքում և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանության ողջ քաղաքականությունն անվերապահորեն որոշվել է ՀՅԴ կուսակցության, ավելի ճիշտ ՀՅԴ խիստ միաձույլ բյուրոյի կողմից: Դա մեկ անգամ ևս փաստում է, որ ոչ միայն հանրապետության քաղաքական կյանքում, այլև ՀՅԴ շրջանակներում հաստատվել էր կուսակցական խիստ կենտրոնացված իշխանություն, իսկ ընդդիմություն կազմող ձախ-դաշնակցականները այդ միաձույլ կառույցից ներս որևէ տեսակարար կշիռ չէին կարող ունենալ: Այդ իսկ պատճառով էլ հետագայում անդրադարձ կատարելով այդ անհեռատես քաղաքականության հետևանքներին՝ Հովհ. Քաջազունին գրում է. «Չէինք հասկանում, որ մեր սեփական դաստիարակութեան համար մեծ կարիք ունեինք, որ մի գորեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, ի կարգ հրաւիրեր եւ թոյլ չտար, որ դուրս գայինք օրենքի ու իրաւասութեան սահմաններից»¹⁹: Չնայած այն բանին, որ խորհրդարանական համակարգի ժողովրդավարական բնութագրիչներից է նաև խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև հասարակական և ազգային կազմակերպությունների անարգել գործունեությունը, պետք է արձանագրել, որ այդ միտումները ժողովրդավարությանը բնորոշ օրինաչափ զարգացում չունեցան, որի հետևանքով էլ խորհրդարանում գործնականում հաստատվեց միակուսակցական կառավարում: Բայց և այնպես, սրանք չեն նսեմացնում հայոց պետականությունը վերականգնողների ու նրա հիմնադիրների հայրենանվեր ու հերոսական գործը, իսկ այդ արատավոր երևույթները թող լինեն պատմության դաս հետագայում այլևս չկրկնելու համար:

¹⁸ Հովհ. Քաջազունի, Ն. 3. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 30:

¹⁹ Նույն տեղում:

